ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 130-19
20 մարտ 2019թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համյանքի ղեկավարի 2019 թվականի մարտի 20-ի <<ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-100-0017-0043 կադաստրային ծածկագրով տնատիրության և կից հողամասի նկատմամբ Ժորիկ Արմենակի Դավթյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 67-Ա որոշումը և աշխատակազմի քարտուղարի 2019 թվականի մարտի 20-ի <<Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արփինե Դավթյանին համայնքային ծառայության դասային աստիճան շնորհելու մասին>> թիվ 12 հրամանը:

Առդիր՝ 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կպտ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2019թվականի N 67-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-100-0017-0043 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՐԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշումը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը (2019 թվականի փետրվարի 15-ի գործ թիվ ԼԴ3/0020/02/19), քաղաքացի Ժորիկ Արմենակի Դավթյանի (ՌԴ անձնագիր՝ 78 04 368123, տրված՝ 08.07.2005 թվականին) կողմից լիազորված՝ Գառնիկ Հակոբի Թորոսյանի (անձնագիր՝ AN0238172, տրված՝ 09.08.2012 թվականին, 039-ի կողմից) դիմումը, <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրինական հատկացված 0.25647 հա հողամասը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (1973թ.)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրենքի ուժով ճանաչել Ժորիկ Արմենակի Դավթյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի 06-100-0017-0043 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0.25647 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի չափերը որոշվում են Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից հաստատված և <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծով:

3. Ճանաչել Ժորիկ Արմենակի Դավթյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի 06-100-0017-0043 կադաստրային ծածկագրով 0.25647 հա հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ համաձայն <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծի:

4. Տնատիրությանը տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Սարչապետ, փողոց 1, տուն 35:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմունքում:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ.մարտ 20
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

20 ՄԱՐՏԻ 2019թվականի N 12

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՐՓԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արփինե Համլետի Դավթյանը հաջողությամբ ավարտել է փորձաշրջանը և ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ. հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արփինե Համլետի Դավթյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

Աշխատակազմի քարտուղար՝ **ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2019 թ. մարտի 20
գ.Սարչապետ